

# Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2009

## թվականին կատարած աշխատանքների և մարզի

### սոցիալ-տնտեսական վիճակի մասին

#### Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետը և մարզպետարան աշխատակազմը 2009թ. աշխատանքային գործունեությունը սկսել են մարզի 97 համայնքների և շուրջ 300 հազար բնակչության հիմնախնդիրներից բխող մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների իրականացմամբ: Հենց տարեսկզբին առաջացավ օբյեկտիվ անհրաժեշտություն գործողությունների հիմքում դնելու ՀՀ կառավարության 2008թ. նոյեմբերին ընդունած «Հակաճգնաժամային ծրագրի» մի շարք դրույթներ, քանի որ Արմավիրը, լինելով հանրապետության տնտեսության տեսակարար կշռի մեջ զգալի մաս ունեցող մարզ, չէր կարող հաշվի չնստել համաշխարհային տնտեսական ճգնաժամի առաջացրած ռիսկերի հետ և ձեռնամուխ չլինել դրանց հաղթահարման տնտեսական նոր հնարավորությունների որոնմանը մարզի մասշտաբով:

Ամփոփելով 2009թ. 12 ամիսների կատարած աշխատանքները, այսօր կարող ենք արձանագրել հետևյալ արդյունքները.

1. մարզում պահպանվել է ֆինանսական հատվածի կայունությունը.
2. ունեցել ենք համախառն ներքին արդյունքի աճ 10%-ից ավել.
3. պետական բյուջեից ֆինանսավորվող առանձին ծրագրերի ծախսային մասով ունեցել ենք խնայողություններ.
4. մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրումը հասցվել է 100.8 %-ի, նախորդ տարվա 80.4%-ի համեմատ.
5. մարզպետարանի ենթակայության ներքո գտնվող կազմակերպություններում չունենք կուտակված պարտքեր.
6. մարվել են համայնքների ղեկավարների աշխատակազմերում կուտակված 161801.2 հազ. դրամի աշխատավարձերի և սոց վճարների պարտքեր այդ թվում աշխատավարձ պարտք՝ 133846.3 սոց վճարը՝ 27954.9, և անթույլատրելի ենք համարել նոր պարտքերի կուտակումը, այս խնդիրը մշտապես եղել և մնում է նաև ՀՀ տարածքային կառավարման նախարարի ամենօրյա հսկողության ներքո.
7. շարունակել ենք աշխատանքը մարզի զարգացման գերակա ներքոհիշյալ ուղղություններով՝

#### Գյուղատնտեսության բնագավառ

ա/ մարզի գյուղմթերքներ արտադրողներին մշտական աջակցության կազմակերպումը, հատկապես Արմավիրի մարզի համար տնտեսապես շահավետ պտղի, խաղողի, բանջարեղենի արտադրության և մթերքի իրացման կազմակերպումը.

բ/ գյուղացիական տնտեսություններին ագրոտեխնիկական աջակցության կազմակերպումը /մշակվող մշակաբույսերի լավագույն սերմացուի, տնկանյութի ձեռքբերումը, ցանքերի և մշակության ճիշտ կազմակերպումը, բույսերի հիվանդությունների, վնասատուների դեմ պայքարի կազմակերպումը.

գ/ մարզի գյուղատնտեսության համար բացասական ազդեցությունների /ցրտահարությունների, կարկտահարությունների և այլ բնական աղետների/ կանխարգելման և դրանց հետևանքների դեմ պայքարի կազմակերպումը:

2009 թվականի աշնանը «Վիվասել-ՄՏՍ» ՓԲԸ-ի հովանավորությամբ մարզի Այգեշատ, Շենավան և Բերքաշատ համայնքներում տեղակայվել են 6 հակակարկտային կայաններ, որոնց գումարվել է ևս երկուսը՝ Արշալույս համայնքում:

Մարզի տարածքում կարկտահարության հետևանքները մեղմելու նպատակով նախատեսված է 2010 թվականին մարզի սահմանամերձ 18 համայնքներում յուրաքանչյուր 900 մետրի վրա տեղադրել 1 հակակարկտային կայան:

2009թ. մարզում արտադրվել է 100.6 մլրդ. դրամի գյուղ.մթերք, խաղող՝ 91.6 հազ.տոննա, պտուղ՝ 88.0 հազ.տոննա, բանջարեղեն՝ 363.6 հազ.տոննա, բոստան՝ 140.5 հազ. տոննա, կարտոֆիլ՝ 53.2 հազ.տոննա, հացահատիկ և հատիկընդեղեն՝ 27.4 հազ. տոննա:

Մարզից արտահանվել է 6000 տոննա ծիրան, 300 տոննա դեղձ և 5000 տոննա խաղող: Աշխատանքներ են տարվում արտերկրյա գործընկերների հետ՝ բանջարեղենի արտահանումը կազմակերպելու ուղղությամբ:

Համակարգվել է «Ջրառ» ՓԲԸ-ի և 10 ՋՕԸ-ների գործունեությունը ջրօգտագործողներին ժամանակին ջրամատակարարման, ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և ջրի վարձավճարների հավաքագրման ուղղությամբ: Մարզի 49360 ջրօգտագործողներին մատակարարվել է 189.79 մլն. մ<sup>3</sup> ոռոգման ջուր՝ 1708.33 մլն. դրամ հասույթով, որի դիմաց գանձվել է 1404.3 մլն. դրամ կամ գանձման մակարդակը կազմել է 82.2 %, նախորդ տարվա 282.46189.18 մլն. մ<sup>3</sup> մատակարարված ոռոգման ջրի, 2542.16 մլն. դրամ հասույթի և 1400.29 մլն. դրամ գանձված գումարի և 55.1% գանձման մակարդակի համեմատ:

Որոշակի աշխատանքներ են տարվել մարզի չմշակվող հողերն արտադրության մեջ ներառելու ուղղությամբ:

2009. մաքրվել և վերանորոգվել է 50 կմ երկարությամբ ջրահեռացման բաց համակարգեր:

Կատարված աշխատանքների շնորհիվ այս տարի առաջին անգամ չունեցանք զարնանային հեղեղումների դեպքեր, որոնք մեծ վնասներ էին պատճառում ինչպես գյուղ. հողերին, այնպես էլ բնակավայրերին: Դեռևս խնդիր է մնում սելավատարների և հեղեղատարների մաքրման գործի կազմակերպումը, հստակեցված չէ դրանց պատկանելիությունը: Նշված խնդիրները մեր կողմից բարձրացվել են նաև 17.12.2009թ. ՀՀ Արմավիրի մարզում կայացած ՀՀ Կառավարության արտագնա նիստում, և խնդրել ենք ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ հստակեցնելու՝ արդյոք հեղեղատարները պետք է մաքրվեն նախարարության, թե համայնքների ֆինանսական միջոցների հաշվին:

2009թ. ևս շարունակվել է գյուղ.տնտեսություններին պարարտանյութով ապահովելու խնդիրների լուծման համակարգումը, միաժամանակ փորձ է արվել նաև այլընտրանքային եղանակով՝ հատկապես Իրանի Իսլամական Հանրապետության հետ հաստատած բարեկամական կապերի արդյունքում, լուծել մարզ ավելի էժան և որակյալ պարարտանյութ ներկրելու խնդիրը:

Ոլորտում մարզպետարանը համագործակցել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ԳԱՄԿ-ի, գյուղ.տնտեսությունները վարկավորող բանկային և վարկային կազմակերպությունների հետ:

Նկատի ունենալով գյուղտեխնիկայի պահանջարկը, խնդրում ենք հանձնարարել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ 2010 թվականին մարզի Արմավիր և Էջմիածին տարածաշրջաններում ստեղծելու 2 մեքենատրակտորային

կայաններ, որով կլուծվի գյուղացիական տնտեսություններին նոր մեքենաներով աջակցելու և աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու խնդիրը:

Անասնապահության բնագավառում համակարգվել է անասնազիխաքանակի հաշվառման, տվյալների հավաստիության ստուգման, գյուղ.կենդանիների հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների իրականացման աշխատանքները:

Մարզի հողերի ռացիոնալ օգտագործման խնդրի լուծմանը մեծապես կնպաստի Թալինի և Արմավիրի մայր ջրանցքների վերակառուցման ծրագիրը շուրջ 9 մլրդ. դրամ արժողությամբ, որի համար մեր հատուկ շնորհակալությունն ենք հայտնում ՀՀ կառավարությանը, որն անգամ ճգնաժամի պայմաններում շարունակում է ծրագրի իրականացումը:

Բնապահպանության ոլորտում մարզպետը վերահսկել է օրենսդրության կիրարկման գործընթացը:

2009թ.-ին շարունակվել է ընդերքօգտագործման նպատակով հողատարածքներ հատկացնելու և օգտակար հանածոների արդյունահանման նկատմամբ հսկողության աշխատանքները:

դ/ 2010թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառվել է.

- 41327 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակաս է՝ 881-ով,
- 58381 գլուխ ոչխար, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակաս է՝ 779-ով,
- 15913 գլուխ խոզ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է՝ 5706-ով,
- 8468844 թռչուն, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է՝ 450263-ով:

**Գյուղատնտեսության ոլորտի** կարևորագույն հիմնախնդիրը մարզում շարունակում է մնալ մարզում արտադրված գյուղմթերքների համար սպառման նոր շուկաների որոնման, գյուղատնտեսության մեքենայացման պահանջարկի ապահովման, գյուղմթերքներ վերամշակող փոքր ձեռնարկությունների հիմնման, ինչպես նաև մարզում արտադրված մթերքների համար արտերկրում գործընկերներ որոնելու, նրանց հետ համագործակցություն կազմակերպելու խնդիրները, որոնք նաև դարձան Ռ-Դ Յարոսլավի և Սվերդլովսկի մարզերի հետ 2009թ.-ի ընթացքում սկսված համագործակցության կարևորագույն ուղղությունները:

### **Հողաշինության և հողօգտագործման բնագավառ**

2009թ. ոլորտում մարզպետարանն իրականացրել է հսկողություն համայնքների կողմից իրականացված հողօգտագործման և հողային օրենսդրության կիրարկման նկատմամբ:

Համայնքների վարչական սահմաններում և դրանից դուրս ապօրինի հողօգտագործման հայտնաբերման, կանխարգելման, կասեցման և վերացման ուղղությամբ:

Կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը և մեթոդական օգնություն է ցույց տրվել համայնքներին այդ գործընթացը կազմակերպելու հարցում:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համատեղ լուծվել են մի շարք միջհամայնքային հողային վեճեր, ինչպես նաև ՀՀ մշակույթի նախարարության հետ համատեղ ուսումնասիրվել է մարզում եղած դամբարանաշերտերի և հատուկ պահպանվող տարածքների պահպանման վիճակը: Իրականացվել է հսկողություն հողերի աճուրդ վաճառքների և վարձակալության կազմակերպման օրինականության, ինչպես նաև մշակովի հողերի նպատակային նշանակության փոփոխության և կառուցապատման հիմնավոր անհրաժեշտության առկայության նկատմամբ:

Լուրջ համագործակցություն է ծավալվել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և մարզի միջև՝ հողերի կադաստրային արժեքների ուսումնասիրության և վերագնահատումների իրականացման նպատակով:

### **Քաղաքաշինության բնագավառ**

Քաղաքաշինության բնագավառում մարզպետն իրականացրել է կազմակերպչական և վերահսկողական գործառույթներ:

Ուսումնասիրվել է մարզի առաջնահերթ հիմնանորոգման ենթակա օբյեկտները, դրանցից առանձնացվել են առավել վատ վիճակում գտնվողները, կատարվել են հիմնանորոգման խոշորացված հաշվարկներ և կազմվել է ՀՀ Արմավիրի մարզի քաղաքաշինության ոլորտի 2009-2011թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի /ՄԺԾԾ/ հայտը և ներկայացվել ՀՀ կառավարություն:

ՀՀ 2009թ. պետական բյուջեով Արմավիրի մարզին հատկացվել է 2086090.9 հազ. 1.311 մլն դրամ, որից՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության ծրագրերով 1037162.6 հազ. դրամ գումար 12 կրթական օբյեկտների հիմնանորոգման և 2 օբյեկտի կառուցման համար, որից 318880.0 հազ. դրամը կասեցվել է: Մնացած մասով աշխատանքներն իրականացվել են:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի ծրագրերով 998494.3 հազ. դրամի իրականացվել է 15 կրթական օբյեկտների կառուցում և հիմնանորոգում, ինչպես նաև Բամբակաշատ գյուղի մշակույթի տան տանիքի վերանորոգում և ջեռուցման համակարգի կառուցում: Տրված գումարներից կասեցվել է 447.252 հազ. դրամ գումար:

Մարզի համար լուրջ խնդիր է մնում հատկապես վթարային դպրոցների հիմնանորոգումը և վթարայնության վերացումը, ինչպես նաև Ոսկեհատ գյուղի 4-րդ կարգի վթարային շենքի 16 բնակարանատների բնակարանային խնդիրը լուծելու նպատակով փոխհատուցման տրամադրման հարցը և խնդրում ենք ՀՀ կառավարությանը 2010թ. պետական բյուջեի ծախսային մասի ավելացման շրջանակում ընդգրկել ՀՀ տարածքային կառավարման նախարարության և մարզպետարանի համատեղ հանձնաժողովի կողմից առանձնացված մարզի վթարային դպրոցներից, դրանք են Լուկաշինի, Խանջյանի, Էջմիածնի թիվ 2, թիվ 5 և թիվ 7 դպրոցները, որոնք ներկայացվել են որպես առաջնահերթ հիմնանորոգման ենթակա օբյեկտներ, ինչպես նաև Ոսկեհատ և Ալնայիճ համայնքների վթարային քանդման ենթակա շենքերի ընտանիքների փոխհատուցման խնդիրները:

Ոլորտում հետևողականորեն կազմակերպվել է մարզի տարածքում քաղաքաշինական գործունեության վերահսկողության աշխատանքները, միաժամանակ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով մասնագիտական աջակցություն, բացատրական աշխատանքներ առաջացած հարցերի պարզաբանման համար:

Ուսումնասիրվել է համայնքներից ուղարկված 67 հողհատկացման հայտեր: Ներկայացված հայտերը սահմանված կարգով համաձայնեցվել են մարզպետարանի, իսկ 10-ը՝ նաև ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ, առանձին հայտեր մերժվել են:

Մարզի համայնքների գլխավոր հատակագծերի կազմման նպատակով կազմակերպվել է Արմավիր քաղաքի և Մերձավան գյուղի գլխավոր հատակագծերի կազմման աշխատանքները, որոնցից Արմավիր քաղաքինը՝ ավարտման փուլում է:

### **Ճանապարհաշինության բնագավառ**

Արմավիրի մարզի ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 593.9 կմ, որից միջպետական նշանակության՝ 109.0 կմ, հանրապետական՝ 186.0 կմ, տեղական՝ 298.9 կմ:

2009թ. ընթացքում կատարվել են ինչպես միջպետական նշանակության, այնպես էլ հանրապետական և տեղական նշանակության ճանապարհների առանձին հատվածների հիմնանորոգումներ տարբեր ծրագրերով:

Ոլորտում հիմնախնդիր է մնում տեղական նշանակության ճանապարհների անմխիթար վիճակը, որը նաև լուրջ տնտեսական խոչընդոտ է մարզում արտադրված գյուղմթերքների տեղափոխումը ժամանակին և որակյալ կազմակերպելու հարցում:

Մարզի ներքին ճանապարհների ընդամենը 7.4%-ն է գտնվում լավ վիճակում, մնացած ճանապարհների վիճակը՝ շուրջ 50%, գնահատվում է շատ վատ և վատ, և բավարար վիճակում գտնվողը՝ ընդամենը 40%:

Աշխատանքներ են տարվում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության 2010թ. ծրագրերով շարունակելու իրականացնել Արմավիրի մարզի հանրապետական և տեղական ճանապարհների հիմնանորոգման աշխատանքները: Հատկապես կարևորում ենք Էջմիածին-Մարգարա, Արմավիր-Ղարաղալա, Նոր Արտագերս-Նոր Կեսարիա և Արմավիր-Նորապատ, Մրգաշատ-Ալաշկերտ-Արևիկ հատվածների հիմնանորոգումը՝ կապված հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման խնդրի հետ:

### **Տրանսպորտի բնագավառ**

Ոլորտում կազմակերպվել է միջհամայնքային հասարակական տրանսպորտի աշխատանքը: Մարզի համայնքները սպասարկվում են ներմարզային թվով 22 երթուղիներով, որից 14 ավտոբուսային /թվով 32 ավտոբուս/ և 8 միկրոավտոբուսային /թվով 23 միկրոավտոբուս/:

Բոլոր երթուղիները հատկացվել են մրցութային կարգով՝ օրենսդրությանը համապատասխան:

### **Արդյունաբերության և ենթակառուցվածքների բնագավառ**

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել և համակարգվել է ենթակառուցվածքների, արդյունաբերական ձեռնարկությունների և անշարժ գույքի կադաստրի գործունեությունը:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը 2009թ. հաշվետու ժամանակահատվածում կազմել է.

1. Էլ. էներգիա արտադրվել է՝ 2241.7 մլն ԿՎՏ
2. Մեքենաշինություն, հաստոցաշինություն-պողպատ՝ 437 տոննա, թուջ՝ 28.2 տոննա
3. Քիմիական արդյունաբերություն՝ պլաստմասե իրեր՝ 356.3 տոննա
4. Շինանյութի արդյունաբերություն՝ ասֆալտ-բետոն՝ 9212.2 տոննա
5. Սննդի արդյունաբերություն.
  - կաթ՝ 55.0 հազար լիտր
  - պաղպաղակ՝ 14.9 հազար լիտր
  - ալյուր՝ 1050.7 տոննա
  - համակցված կերեր՝ 484.4 տոննա
  - հաց և հացամթերքներ՝ 735.0 տոննա
  - կոնյակ՝ 679.5 հազար լիտր
  - գինի՝ 444.0 հազար լիտր
  - թույլ ալկահոլային խմիչքներ՝ 4.3 հազ. լիտր
6. Մսամթերք.
  - թռչնի միս՝ 1545 տոննա
  - խոզի միս՝ 23.8 տոննա
  - 1558.8 տոննա
7. Մսամթերքի արտադրություն՝ 913 տոննա
8. Բնական հյութեր՝ 512 հազար լիտր

2009թ. 1-ին կիսամյակում արդյունաբերության ծավալը կազմել է 17121 մլն դրամ, իրացումը՝ 17915 մլն դրամ:

2009թ. 2-րդ կիսամյակում թողարկված արտադրանքի ծավալը կազմել է 18232 մլն դրամ, իրացումը՝ 184.20 մլն դրամ:

2009թ. ընդհանուր արդյունաբերական համախառն արտադրանքի ծավալը կազմում է 33.521.1 մլն դրամ, իսկ իրացումը՝ 35.843 մլն դրամ:

Մարզի ազգաբնակչությունը սպասարկվել է Էջմիածնի ջրնուղ կոյուղու և «Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից: 2009թ. կառուցվել են նոր ջրագծեր՝ 31750 գծ.մետր երկարությամբ:

Ջրամատակարարման բնագավառում խնդիր է մնում մարզի Տարոնիկ, Խորոնք, Ֆերիկ, Մուսալեռ, Սարդարապատ համայնքների խմելու ջրագծերի կառուցումը և հին ցանցերի հիմնանորոգումը, ուստի խնդրում ենք ջրային տնտեսության պետական կոմիտեին՝ առաջիկա ծրագրերում ընդգրկելու վերոհիշյալ խնդիրը:

Գազիֆիկացման բնագավառում Արմավիրի տարածաշրջանում կառուցվել է 30000 գծ.մետր տարբեր տրամագծի գազատարներ տարբեր համայնքներում: Տեղի է ունեցել բաժանորդների թվի աճ 2008թ. նկատմամբ:

Էջմիածնի տարածաշրջանում կառուցվել է 5153 գծ.մետր տարբեր տրամագծերի գազատարներ, այստեղ ևս առկա է բաժանորդների թվի աճ: «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի և ԻՖԱՏ ծրագրի ֆինանսավորմամբ իրականացվում է մարզի Ջանֆիդա և Փշատավան համայնքների գազիֆիկացման աշխատանքները, համապատասխանաբար 93.5 մլն. և 60.0 մլն. դրամ արժեքով: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

Ոլորտում խնդիր է մնում Բագարան, Երվանդաշատ համայնքների գազիֆիկացման աշխատանքների ավարտումը, որը նաև ընդգրկված է եղել ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրի մեջ, ինչպես նաև Էջմիածնի տարածաշրջանի Հայկաշեն, Սեծամոր, Արաքս և Ֆերիկ գյուղական համայնքների գազիֆիկացման իրականացումը, որով, փաստորեն, կլուծվի մարզն ամբողջությամբ գազիֆիկացնելու խնդիրը:

Բնակավայրերի մաքրման և աղբահեռացման ուղղությամբ ՀՀ Արմավիրի մարզպետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից պարբերաբար ստուգայցեր են կատարվել համայնքներ և տեղ գտած թերությունների վերացման նպատակով համապատասխան հանձնարարականներ են տրվել համայնքների ղեկավարներին, ինչպես նաև վարչական պատասխանատվության են ենթարկվել առանձին քաղաքացիներ և իրավաբանական անձինք:

Աշխատանքներ են կատարվել մարզի համայնքների ղեկավարների հետ «Հողարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթների կատարման ուղղությամբ, որի արդյունքում 40 համայնք արդեն ունեն գերեզմանատան տարածքի օգտագործման սխեմա, իսկ մնացած համայնքներում աշխատանքներն ընթացքի մեջ են:

Ջրամատակարարման բնագավառում մի շարք համայնքներում ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ խորքային հորերի սանիտարական գոտիների վերականգնման, ցանկապատման, վթարների վերացման և բնակչությանը մատակարարվող խմելաջրի վարակազերծման ուղղությամբ: Բնակավայրերի կանաչապատման, մաքրման և աղբահեռացման ուղղությամբ կազմակերպվել և համակարգվել է մարզի կոմունալ կազմակերպությունների գործունեությունը:

Մարզի բոլոր համայնքների հետ աշխատանքներ են տարվել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործառույթների պահանջների պարտադիր կատարման վերաբերյալ՝ ապահովելով ստուգման և հսկողության արդյունքների մասին տեղեկատվություն:

Համագործակցելով էլեկտրացանցերի հետ, աշխատանքներ են տարվել մարզի էներգետիկ օբյեկտների և բարձր լարման հոսանքի գծերի անվտանգության գոտիներում գտնվող շենք-շինությունների կանոնակարգման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում փոքր ու միջին բիզնեսին աջակցելու նպատակով մարզպետարանը համագործակցել է ՓՄՁ-ի հետ, որի միջոցով առանձին գործարարների աջակցելու նպատակով մշակվել են տարբեր ոլորտների զարգացման ծրագրեր և ներկայացվել ՀՀ կառավարություն:

### **Առողջապահության բնագավառ**

2009թ. 12 ամիսների ընթացքում ծավալվել և գործնական աշխատանքներ են տարվել մարզում պետական առողջապահական ծրագրերի իրականացման, մարզային ենթակայության պետական առողջապահական հաստատությունների աշխատանքների կազմակերպման, օրենսդրությամբ սահմանված կարգով բնակչությանն անվճար բուժօգնության ապահովման, պետական պատվերի ֆինանսավորման իրականացման, մարզային ենթակայության առողջապահական հաստատությունների շենքերի կառուցման, պահպանման, շահագործման, ինչպես նաև մարզի տարածքում հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների կանխարգելման ուղղությամբ: Աշխատանքներն իրականացվել են մարզում գործող 58 առողջապահական հիմնարկների միջոցով, որոնցից 8-ը՝ մարզպետարանի ենթակայության, 50-ը՝ «Գյուղական բժշկական անբուլատորիա» ՓԲԸ համայնքային ենթակայության, որոնցից 1-ը առողջության կենտրոն՝ Երվանդաշատի ԱԿ:

Մարզի առողջապահական հիմնարկների տարեկան գործալ բյուջեն կազմել է 1 մլրդ. 948 մլն. դրամ:

Առողջապահության բնագավառում մարզպետարանը համագործակցել է ՀՀ առողջապահության նախարարության և մի շարք միջազգային կազմակերպությունների, հիմնադրամների հետ ինչպես գյուղական ամբուլատորիաների հիմնանորոգումների, առողջապահության համակարգը նոր տեխնիկայով վերազինելու, այնպես էլ ոլորտի աշխատողների վերապատրաստումներ իրականացնելու նպատակով:

2009. հաշվետու ժամանակահատվածում ստացվել և ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներին է բաշխվել հակադիաբետիկ, հակատուբերկուլյոզային, հոգեմետ և պարբերական հիվանդությամբ տառապողների համար դեղորայք: Հումանիտար ճանապարհով ստացվել և բաշխվել է 56 մլն. 723 հազ. 200 դրամ արժողությամբ տարբեր դեղամիջոցներ: Ընդամենը ստացվել և բաշխվել է շուրջ 103 մլն. 281 հազ. դրամ արժողությամբ դեղորայք:

Համաշխարհային բանկի վարկային ծրագրով 2009թ. հուլիս ամսից սկսված Արմավիրի մարզային հիվանդանոցի վերակառուցման, վերանորոգման և վերազինման աշխատանքներն ավարտված են: 17.12.2009թ. ՀՀ Արմավիրի մարզում կայացած ՀՀ Կառավարության արտագնա նիստում խնդրել ենք ՀՀ առողջապահության նախարարությանը՝ իրենց ծրագրերում ընդգրկել «Վաղարշապատի հիվանդանոց» ՊՓԲԸ-ի հիմնանորոգման աշխատանքները, որը նախատեսված էր իրականացնել դեռևս մարզի առողջապահական հիմնարկների օպտիմալացման ՀՀ կառավարության 2001թ. հաստատված ծրագրով, և ոչ պետական միջոցներով վերանորոգվել են միայն «Վաղարշապատի հիվանդանոց» ՊՓԲԸ-ի երկու բաժանմունքները:

Անցած 12 ամիսներին հաշվառման և հսկողության տակ գտնվող 3467 հոլիներից 3449-ին տրամադրվել է ծննդօգնության հավաստագրեր, ինչպես նաև համապատասխան խորհրդատվություն՝ խորհրդատվական կենտրոններում:

Մարզում ծնվել են 3657 երեխաներ, գրանցվել է պերինատալ մահացության՝ 34, 0-1 տարեկան երեխաների մահացության 14 դեպք:

Չնայած 2009թ. 12 ամիսներին համաճարակային իրավիճակը եղել է կայուն և վերահսկելի, չեն արձանագրվել տարափոխիկ հիվանդությունների և սննդային թունավորումների դեպքեր, մարզում առկա է վտանգը Չարթոնքի և Արտաշարի

տարածաշրջանում խոլերայի բռնկման, որն ունեցել ենք նախկինում, քանի դեռ չի լուծվել Մեծամոր քաղաքի մաքրման կայանի կառուցման խնդիրը:

Վերահսկվում է նաև գրիպի նոր համաճարակի ընթացքը մարզի առողջապահական հիմնարկների կողմից: ՀՀ առողջապահության նախարարությունից ստացվել է տամիֆլյու դեղամիջոցը, բաշխվել է առողջապահական հիմնարկներին և տրվել համապատասխան ցուցումներ՝ ըստ անհրաժեշտության այն օգտագործելու մասին:

### **Սոցիալական ապահովության բնագավառ**

2009թ. 12 ամիսների ընթացքում մարզի երեք սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններում «Ընտանիքների անապահովության գնահատման» համակարգում հաշվառված նպաստառու ընտանիքների թիվը կազմել է 5371: Նպաստների վճարման գծով պարտքեր չկան:

Մարզի զբաղվածության տարածքային գործակալություններում հաշվառված են 3770 գործազուրկներ:

Արմավիրի մարզային սոցիալական ապահովագրության տարածքային կենտրոններում հաշվառված են 38 551 կենսաթոշակառուներ:

Մարզում առկա են 232 Հայրենական Մեծ պատերազմի վետերան-հաշմանդամներ: Ելնելով Հայրենական պատերազմի մասնակիցների փոքր թվերից, և ի պատիվ Հայրենական պատերազմի հաղթանակի 65-ամյակի, առաջարկվում է գտնել հնարավորություններ նրանց ընդգրկելու առաջնահերթության կարգով խնայողամարկդներում ներդրած դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման ցուցակներում:

Մարզում կենսաթոշակները վճարվում են առանց ուշացումների:

«Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից մարզին հատկացվել է 11 մլն. 952 հազ. դրամ: Իրականացվել են շուրջ 4145600 դրամ արժողության ծրագրեր, մնացած գումարը ետ է ուղարկվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

2009թ. 12 ամիսների ընթացքում Արմավիրի մարզպետարանում հաշվառվել են բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող Արցախյան պատերազմում զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ 22 ընտանիքներ: 18 ընտանիքներ ՀՀ կառավարության 09.06.2005թ. թիվ 947-Ն որոշման համաձայն ՀՀ պաշտպանության նախարարությունից 2009թ. ընթացքում պետական աջակցություն են ստացել 141.313000 դրամի չափով:

Անցած ժամանակահատվածում մարզպետի համապատասխան որոշումներով սոցիալական աջակցություն է տրվել 657 ընտանիքների: Համագործակցելով ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության հետ, 26 փախստական ընտանիքների տրվել է ՀՀ քաղաքացիություն: Սոցիալապես անապահով ընտանիքների 215 երեխաների ամառային հանգիստն է կազմակերպվել «Հասմիկ» ճամբարում՝ 2 հերթափոխով:

### **Երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառ**

Մարզի հանրակրթական և հատուկ /օժանդակ/ դպրոցներից պարտադիր ուսուցումից դուրս մնացած աշակերտների մասին ստացված տեղեկատվության հիման վրա ձեռնարկվել են հնարավոր բոլոր միջոցները նրանց դպրոցներ ինտեգրելու համար:

Սկզբնական, տարածքային և կենտրոնացված հաշվառման են վերցվել թվով 10 առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ և 2 առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք:

Վկայագրվել է թվով 69 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, ինչպես նաև վերականգնվել է թվով 10 պարտադիր ուսուցումից դուրս մնացած աշակերտների կրթական իրավունքը: Միաժամանակ լուրջ աշխատանքներ են տարվել



ծննդյան վկայական չունեցող երեխաների հայտնաբերման և նրանց համապատասխան փաստաթղթով ապահովելու ուղղությամբ:

Հաշվառվել են մարզում բնակվող բոլոր խոցելի խմբերի երեխաները, վարվել են տարածքային շտեմարաններ: Առանց ծնողական խնամքի մնացած մեկ անձի հատկացվել է բնակարան:

Տարածքային հաշվառման է վերցվել որդեգրման ենթակա 5 երեխա:

Ուշադրության կենտրոնում են եղել ամուսնալուծված ընտանիքների երեխաների հիմնախնդիրները:

Ուշադրության կենտրոնում են եղել նաև կանանց հիմնահարցերը:

### **Կրթության բնագավառ**

2009թ. մարզպետը շարունակել է իրականացնել պետական կրթական ծրագրերը հանրակրթության բնագավառում:

Կազմվել և ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել 2009-2011թթ. մարզի հանրակրթական համակարգի միջնաժամկետ ծախսային ծրագիրը:

Ժամանակին իրականացվել է դպրոցների նախապատրաստումը ուսումնական տարվան, հնարավորինս դպրոցներն ապահովվել են դպրոցական գույք-սարքավորումներով, ժամանակին մարզ են տեղափոխվել և դպրոցներն ապահովվել են դասագրքերով և այլ ուսումնաօժանդակ գրականությամբ, «Փյունիկ» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում մարզի 60-ից ավելի դպրոցներ ապահովվել են բնագիտական առարկաների լաբորատոր սարքավորումներով և ժամանակակից տեխնիկական միջոցներով:

Կազմակերպվել և անցկացվել են դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային և մարզային փուլերը, ինչպես նաև մասնակցությունը հանրապետական փուլին:

Խրախուսվել են ինչպես մարզային, այնպես էլ հանրապետական փուլերին հաղթող աշակերտները:

Իրականացվել է դպրոցների ապահովումը որակյալ մանկավարժական կադրերով, շարունակվել է մարզից մանկավարժական բուհեր, հատկապես սահմանամերձ գյուղերից նպատակային գործուղումները:

2009թ. սեպտեմբերին մարզի երեք քաղաքներում ձևավորվել են 5 ավագ դպրոցներ:

Կազմակերպվել և վերահսկվել է ուսումնական գործընթացը, ստուգումներ և ուսումնասիրություններ են կատարվել մի շարք դպրոցներում:

Կազմակերպվել և անցկացվել է առանձին դպրոցի տնօրենների ընտրություններ՝ համաձայն գործող կարգի:

Իրականացվել է վերահսկողություն դպրոցում ջեռուցման գործընթացի կազմակերպման, սանիտարահիգիենիկ և անվտանգության ապահովման, ինչպես նաև սովորողների սննդի կազմակերպման նկատմամբ:

Համակարգվել է նախադպրոցական տարիքի երեխաների հետ տարվող աշխատանքները համայնքների կողմից:

Կազմակերպվել և իրականացվել է ավարտական և միասնական քննությունների աշխատանքները:

Ուշադրության կենտրոնում է պահվել ռազմագիտության և ֆիզկուլտուրայի դասավանդման որակը և պայմանները:

Կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված երեխաների հոգևոր, գեղագիտական, ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

Ոլորտում մարզի կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է մնում արհեստագործական դպրոց ունենալու խնդիրը, որտեղ կպատրաստվեն մարզի տնտեսության տարբեր բնագավառների համար մասնագետներ, և որի համար մարզն ունի շենքային բոլոր հնարավորությունները:

17.12.2009թ. ՀՀ Արմավիրի մարզում կայացած ՀՀ Կառավարության արտագնա նիստում առաջարկվել է ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ բուհերին

հանձնարարել կանոնակարգելու ուսանողներին մարզեր պրակտիկա ուղարկելու գործընթացը, միայն նախապես կնքված աշխատանքային պայմանագրերով՝ տվյալ բուհի ռեկտորատի կամ դեկանատի և մարզպետարանի միջև:

### **Մշակույթի և սպորտի բնագավառ**

Բնագավառում մարզպետարանի նախաձեռնությամբ և մասնակցությամբ մարզում շարունակվել են իրականացվել մի շարք կարևորագույն միջոցառումներ: Մարզը մասնակցել է հանրապետական և միջազգային մշակութային և սպորտային միջոցառումների, մրցույթների, մրցաշարերի, ցուցահանդեսների:

Սպորտի բնագավառում ևս քիչ չեն մարզի պատվավոր նվաճումները, վաստակած մեդալները: 2009թ. ունեցել ենք 2 աշխարհի արծաթե մեդալակիրներ, 2 եվրոպայի չեմպիոններ, արևելյան մարզաձևերից 12 աշխարհի չեմպիոններ և Հայաստանի Հանրապետության չեմպիոններ տարբեր սպորտաձևերից: Լավագույն ցուցանիշներ ապահոված ներկայացուցիչները տարվա ընթացքում արժանացել են մարզպետի հատուկ ընդունելությանը և տարբեր խրախուսանքների:

Մայիսի 28-ին Սարդարապատում կազմակերպվել և անցկացվել է տոնակատարություն ՀՀ առաջին հանրապետության և Սարդարապատի հերոսամարտի 91-ամյակին նվիրված՝ ՀՀ Նախագահի, Կաթողիկոսի և Հայաստանում հավատարմագրված դեսպանների և այլ բարձրագույն հյուրերի մասնակցությամբ:

Ոլորտում լուրջ խնդիր է մնում Արմավիր քաղաքի «Հորելյանական» մարզահամալիրի հիմնանորոգման, ինչպես նաև համայնքների պատմամշակութային արժեք ներկայացնող և Թամանյանի կողմից նախագծված մշակույթի տների հիմնանորոգումը որևէ ծրագրով իրականացնելու խնդիրը: Վերը նշված հարցերը բարձրացվել են 17.12.2009թ. ՀՀ Արմավիրի մարզում կայացած ՀՀ Կառավարության արտագնա նիստում, որոնց առնչությամբ արտահայտել ենք մեր ակնկալիքները ինչպես ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի և ՀՀ մշակույթի նախարարություններից, այնպես էլ Հայաստան համահայկական հիմնադրամից աջակցություն ստանալու հարցում:

### **ՏԻ և ՀԳՄՍՍ բնագավառ**

Մարզպետարանը, մշտապես համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ, իրականացրել է նրանց պետության կողմից պատվիրակված լիազորությունների և պարտադիր լիազորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն:

Վարչական հսկողության արդյունքները քննարկվել են մարզպետի մոտ և ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարին:

Մարզպետարանի աշխատակիցներն անմիջական մասնակցություն են ունեցել համայնքային ծառայության մրցույթներին, ատեստացիաներին, ինչպես նաև վերահսկողություն է իրականացվել ՏԻՄ-ի կողմից համայնքային ծառայության մասին օրենսդրության կիրարկումն ապահովող ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից սահմանված կանոնակարգումների կիրառման նկատմամբ:

Անցկացվել են 87 մրցույթներ և 27 համայնքային ծառայողների ատեստացիաներ, ինչպես նաև ցուցաբերվել է աջակցություն համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացին:

2009թ. շարունակվել է համագործակցությունը հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ՝ հասարակական կարգի պահպանության ու ամրապնդման, քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային միջոցառումների անցկացման և այլ ուղղություններով: Համագործակցել ենք Հայրենական պատերազմի վետերանների և Արցախյան պատերազմի վետերանների խորհուրդների հետ:

Մարզպետարանը համագործակցել է սահմանապահ զորամասի, մարզում տեղակայված հայկական զորամասերի, զինկոմիսարիատների հետ՝ զորակոչի

կազմակերպման, նախագորակոչային տարիքի պատանիների կցագրման աշխատանքները կազմակերպելու ուղղությամբ, որի արդյունքում 2009թ. գորակոչի պլան-առաջադրանքները մարզը կատարել և գերակատարել է: Արդեն ավանդական է դարձել մարզպետի կողմից գորակոչի առաջին օրը մեծ շուքով Սարդարապատի հուշահամալիրում անցկացնելը:

Ավանդական են դարձել մարզում համայնքների ղեկավարների հաշվետվությունների կազմակերպումը ազգաբնակչության առջև՝ մարզպետարանի աշխատակիցների մասնակցությամբ:

### **Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման բնագավառ**

2009թ. իրականացվել են ֆինանսական հոսքերի գործունեության պլանավորման, մարզային ենթակայության թվով 121 ՊՈԱԿ-ների և 8 ՊՓԲԸ-երի բյուջետային հայտերի և նախահաշիվների կազմման, 2009թ. գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների փաթեթների կազմման, նրանց ֆինանսական գործունեության վերլուծության, հաշվետվությունների կազմման և ներկայացման գործընթացները: Կազմվել և համապատասխան գլխադասային մարմիններին են ներկայացվել միջնաժամկետ ծախսերի ծրագրերը՝ ըստ ոլորտների: Իրականացվել է մարզպետարանի 2009թ. կարիքների համար գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների փաթեթների կազմումը և դրանց ներկայացումը պետական գնումների գործակալություն, ինչպես նաև մասնակցություն է ցուցաբերվել «Կրթական օբյեկտների հիմնանորոգում» և «Կապիտալ շինարարություն» ծրագրերով մրցութային հանձնաժողովների աշխատանքներին:

Տարվա ընթացքում մարզպետարանի ուշադրության կենտրոնում է եղել համայնքների սեփական եկամուտների հավաքագրման կատարման ընթացքը և աշխատավարձերի պարտքերի մարման վերահսկողությունը:

2009թ.-ի ընթացքում աուդիտ է իրականացվել մարզպետարանի աշխատակազմում և 38 պետական ոչ առևտրային կազմակերպություններում, որոնց արդյունքները ներկայացվել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ներքին աուդիտի վարչություն: Արձանագրված խախտումները և թերությունները ընթացքում վերացվել են: Ինչպես նաև վերացվել են ՀՀ ֆինանսների նախարարության և Վերահսկիչ պալատի կողմից մարզում կատարված ստուգումներով արձանագրված խախտումները և վերականգնվել են պետական բյուջե հետգանձման գումարները:

### **Անճակագրի կառավարման և քաղաքացիական ծառայության բնագավառ**

2009թ. մարզպետարանը շարունակել է կենսագործել քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրության պահանջները: 2009թ.-ին հայտարարվել է 5 մրցույթ, կնքվել է 4 ժամկետային աշխատանքային պայմանագիր, լուծվել է 3 ժամկետային աշխատանքային պայմանագիր: Համապատասխան դասային աստիճաններ են ստացել 5 քաղաքացիական ծառայողներ: Թափուր պաշտոնների թիվը 7-ն է: Կիրառվել են խրախուսանքներ և տույժեր առանձին քաղաքացիական ծառայողների նկատմամբ:

### **Իրավական աջակցության և քաղաքացիների հետ տարվող աշխատանքի**

#### **բնագավառ**

Իրավական և մասնագիտական աջակցություն է ցուցաբերվել ինչպես մարզի տարբեր կազմակերպությունների, այնպես էլ քաղաքացիների: Կազմակերպվել է փաստաթղթաշրջանառությունը՝ գործող կարգերին համապատասխան:

Լուրջ ուշադրություն է դարձվել մարզպետարանի միջազգային կապերի հաստատմանը: 2009թ. ընթացքում բարեկամական կապեր են հաստատվել Իրանի Իսլամական Հանրապետության Ատրպատականի նահանգի, Ռուսաստանի Դաշնության Սվերդլովսկի և Յարոսլավի մարզերի, ինչպես նաև Սլովակիայի Տրնավա մարզի հետ:

Մարզը համագործակցել է Արցախի Շուշիի վարչական շրջանի հետ՝ փոխադարձ այցելությունների, մշակութային համատեղ միջոցառումների, նյութական աջակցության ցուցաբերման և այլ ոլորտներում:

Անցած 12 ամիսներին մարզպետարանում մուտքագրվել է 9349 փաստաթուղթ, առաքվել է 3478 փաստաթուղթ:

Կատարվել է քաղաքացիների ընդունելություն մարզպետի մոտ յուրաքանչյուր հինգշաբթի, աշխատակազմում՝ ամեն օր:

Հրավիրվել ու անցկացվել են մարզխորհրդի 11 նիստեր, որտեղ քննարկվել են մարզի սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր խնդիրներ:

Քաղաքացիներից ստացված բոլոր 721 դիմումներին ընթացք է տրվել օպերատիվ և օրենքով սահմանված կարգով:

Հսկողություն է իրականացվել ինչպես ենթակա հիմնարկների ղեկավարների կողմից ընդունված իրավական ակտերի, այնպես էլ ՏԻՄ-երի կողմից ընդունված իրավական ակտերի նկատմամբ:

Աշխատանքներ են տարվում 2010թ. մարզպետարանում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրման ուղղությամբ. վերջինիս արդյունավետ շահագործման նպատակով 17.12.2009թ. ՀՀ Արմավիրի մարզում կայացած ՀՀ կառավարության արտագնա նիստի ժամանակ խնդրել ենք ՀՀ կառավարությանն աջակցել մարզպետարանին համակարգչային տեխնիկայով համալրելու հարցում:

Աշխատանքներ են տարվում մարզի զարգացման 2011-2013թ. եռամյա ծրագիրը ավարտին հասցնելու ուղղությամբ:

Մարզպետի և մարզպետարանի 2009թ. կատարած աշխատանքների հրապարակայնությունն ապահովելու նպատակով պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ լրատվամիջոցների հետ, մամուլի ասուլիսներ, գործել է մարզպետարանի ինտերնետային կայքը, որտեղ ներկայացվել են մարզում իրականացվող ծրագրերը, տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունները, ընդունված իրավական ակտերը, ինչպես նաև կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները:

Մեր առջև դրված խնդիրները հնարավոր է եղել լուծել միայն ՀՀ Նախագահի, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի, ՀՀ տարածքային կառավարման նախարարի ամենօրյա և հետևողական հոգածության, բոլոր նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցության և մարզի համար կարևորագույն նշանակություն ունեցող խնդիրների լուծման գործում մարդկային և նյութական ռեսուրսների համախմբման շնորհիվ: